

էր գեղին ներքին ծախքերուն հաւաքիչը, ընտրուած յորովայնէ սրիկայի մը, որուն խժոժութիւնները կը հաւասարէին թուրք հարկահանին ընդոծին վայրագութեան, երբեմն-երբեմն զայն ալ գերազանցելով, քանի որ ներքին ծախքեր ընդհանուր որակումը կը ծածկէին բոլոր բռնագրաւումներուն, կաշառքներուն, ժանտարմաները, ոստիկանները «անուշելու» արարքներուն զուգորդ կողոպուտները: Սափրիչը, ապառիկ տուած հրեայ շրջորդ փերեզակը, երկաթագործը, ժամկոչը՝ իր ու տէրտէրին հաշուոյն, մէյ-մէկ տոպրակ ուսերնին՝ կը տնկուէին կալին մէջ, արմախքի դէզին շուրջը «պար բոլորած», հարթելով ցորենին տարածուն կոնը, դէզը, արտադրողին ձգելով յաճախ կոթունքը (կամէն չխորտակուած խուժ հասկը, ուրկէ տանտիկինին թակը պիտի կորզէ հատիկը, ընդհանրապէս վատ որակով) ու գալ տարուան յոյսը: Պարտքը գերութիւն է կ'ըսեն եւ ունին իրաւունք: Հարստահարիչները, ո՛ր կրօնքին ալ պատկանէին, կը գտնէին պետական լայն պաշտպանութիւն, գերութիւնը ամրացնող ազդակներ նկատուելով եւ անողոք՝ որքան ամենահաս կազմակերպութեամբ մը գրաւի տակ էին առած հասոյթի բոլոր աղբիւրները: Կապալառուն, վնասի տարիներուն -կարկուտը, երաշտը, մարախը, հեղեղը, ցեղային գրգռութիւնները պարբերական այցելուներ էին այդ վնասները հեղինակող- ուղիղ հրէշ մըն էր, որ կը ստեղծէր: Անասուններուն միսը, կաթը, մորթը, ոսկորները, նոյնիսկ դիակները, բեռնակիրներուն օրուայ ծառայութիւնները երբեմն տուրքի եղան հպատակ: Ու ես ճանչցայ մարդեր, որոնք արօտներուն խոտը, աշնան թափող տերեւներն ալ հասոյթի վերածեցին, անկէ գանձելով իրենց իրաւունքը: Հեռու գեղեր գաղթող մարդոց շահն ալ չմոռցան գանձելէ անոնց գեղ մնացած պարագաներէն, հացի հետըզհետէ դժուարագիւտ դառնալը- գիւղացիները այդ պարագան կը պատկերէին հողը զարնող երաշտը տարածելով արդիւնքն ալ որակին- գիւղապետին անձնական հեղինակութիւնը, որ չարքաշ ու անխոնջ աշխատող,